ՀՀ ԳԱ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ «ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» 40-ԱՄՅԱԿԸ

Ս. թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի ԳԱԱ-ում տեղի ունեցավ նախագահության ընդլայնված նիստ, որին մասնակցում էին ակադեմիկոսներ, ինստիտուտների տնօրեններ, գիտական աշխատողներ, Երևանի պետական համալսարանի և Հ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոսներ, հյուրեր արտասահմանից, մամուլի ու ռադիոյի ներկայացուցիչներ և ուրիշներ։

Բացելով նիստը, ակադեմիայի պրեզիդենտ Ֆ. Տ. Սարդսյանը ասաց. այսօր մենք նշում ենք մեծ համբավ ձեռք բերած «Պատմա-բանասիրական հանդեսի» 40-ամյակը։ Արդեն չորս տասնամյակ շարունակ բարձր մակարդակով քննարկվում ու լուսաբանվում են հայագիտության, կովկասագիտության, արևելագիտության հարցեր։ Պարբերականը իր շուրջն է համախմբել ինչպես հայ, այնպես էլ օտարազգի բազմաթիվ հայագետների։

Կարևոր է նշել, որ Հանդեսում լուսաբանվել են ոչ միայն հին ու միջնադարյան շրջանի, այլև նոր շրջանի պատմության հարցերը։ Հայտնի է, որ ՊԲՀ-ի ստեղծման գործում մեծ են եղել ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի նախաձեռնությունը ու եռանդուն ջանքերը։ Այդ մասին և ընդհանրապես Հանդեսի միջազգային հեղինակության մասին քանիցս գրել է ակադեմիայի նախկին պրեզիդենտ, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը։

Դիմելով Մ. Ներսիսյանին Ֆ. Սարդսյանը ասաց. հարգելի Մկրտիչ Գեղամովիչ, Դուք արդեն 40 տարի անընդմեջ հաջողությամբ խմբագրում եք մեր նշանավոր պարբերականը։ Սրտանց շնորհավորելով «Պատմա-բանասիրական հանդեսի» քառասունամյա պանծալի հոբելյանը, թույլ տվեք սեղմել Ձեր վաստակած, տակավին կորովի ձեռքը և ցանկալ Ձեզ և խմբագրական խորհրդին նորանոր հաջողություններ։

Ակադեմիայի պրեզիդենտը այնուհետև հրապարակեց Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ուղերձը, որում բարձր է գնահատվում Հանդեսի դերը հայագիտության զարգացման գործում։

Ողջույնի խոսքով հանդես եկավ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը։ Խոսքն ուղղելով Հանդեսի խմբագիր Մ. Ներսիսյանին նա ասաց. Ձեր անմիջական ջանքերով ծնունդ առավ մեր բոլորի կողմից սիրված «Պատմա-բանասիրական հանդեսը»։ Այսօր հետադարձ հայացք նետելով Հանդեսի անցած ուղուն, որի անփոփոխ գլխավոր խմբագիրն եք, հիացմունքով պետք է արձանագրել Հանդեսի համընդգրկուն բնույթը, հետաքրքրությունների լայն շրջանակը. հայոց հին և միջնադարյան, նոր և նորագույն պատմություն, աղբյուրագիտություն և վիմագրություն, հնադիտություն և ազգագրություն, դրականագիտություն և լեզվաբանություն, փիլիսոփայություն և իրավունքի պատմություն, արվեստ և ճարտարապետություն։ Երևանի պետական համալսարանի ռեկտորատը, գիտական խորհուրդը և ողջ կոլեկտիվը, այդ թվում նրա առաջատար ջոկատներից մեկը՝ պատմության ֆակուլտետի կոլեկտիվը ջերմորեն շնորհավորում են ՊԲՀ-ի խմբագրությանը Հանդեսի 40-ամյա հոբելյանի առթիվ, ցանկանում են ստեղծագործական մեծ հաջողություններ, ուժ, եռանդ և կորով այս հիրավի հայրենասիրական գործը շարունակելու համար։

Ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանը իր խոսքում ասաց. նշում ենք հոբելյանը մի հանդեսի, որը 40 տարվա ընթացքում իր շուրջն է համախմբել նշանավոր շատ հայագետների ու արևելագետների։ Սովետական իշխանության տարիներին Հանդեսը կարողացավ պահպանել իր բարձր պրոֆեսիոնալ մակարդակը։ Նրա էջերում քննարկվել ու լուսաբանվել են հայագիտական ու արևելագիտական կնճռոտ շատ հարցեր։ Ի դեպ, Հանդեսը մեր ընթերցողներին միշտ էլ տեղյակ է պահել Սփյուռքում կատարվող իրադարձություններին։ Նա հրապարակել է բազմաթիվ հոդվածներ պատմության թուրք, ադրբեջանցի և այլ կեղծարարների դեմ։ Հանդեսի բազմամյա խմբագիր Մ. Ներսիսյանին ցանկանում եմ քաջառողջություն և նոր ստեղծագործական հաջողություններ։

Ակադեմիկոս Ջահուկյանը ասաց. մեր ժամանակակից գիտության մեջ «Պատմա-բանասիրական հանդեսը» ունի իր ուրույն տեղը։ Ճիշտ է, ունեցել ենք «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», բայց Հանդեսն իր գիտական արժեքով ոչ միայն չի զիջում նրանց, այլև շատ հարցերում անփոխարինելի է։ Հանդեսի կայացման գործում մեծ ավանդ ունի մեր սիրելի Մկրտիչ Գեղամովիչը, որի զարմանալի եռանդը, սկզբունքայնությունը, աշխատասիրությունը Հանդեսը դարձրին համաշխարհային կշիռ ունեցող մի պարբերական։ Ցանկանանք երկար կյանք մեր նշանավոր պարբերականին։

Այնուհետև ելույթ ունեցավ ակադեմիկոս Է. Ջրբաշյանը։ Սովորաբար Ակադեմիայի նախագահությունը նշում է այս կամ այն անհատի ծննդյան հոբելյանը։ Առաջին անգամ է, որ մեր կողմից նշվում է մի պարբերականի հոբելյան, որն իր մակայդակով ձեռք է բերել համահայկական, համաշխարհային ճանաչում։ Հանդեսը եկել է փոխարինելու «Բազմավեպին», «Հանդես ամսօրյային»։ Խմբագիր Ներսիսյանը 40 տարի անընդմեջ մեծ նվիրվածությամբ բոլորանվեր աշխատանք է տարել։ Մեծ պատիվ է տպագրվել Հանդեսում։ Վերջին տարիներին, սակայն, կրճատվել է Հանդեսի պարբերականությունը, հասարակությունը սպասում է այս պարբերականին, գոնե կարողանանք երեք համար տպագրել տարեկան։ Շնորհավորում եմ մեզ բոլորիս և առաջին հերթին Մկրտիչ Գեղամովիչին։

Ակադեմիկոս Վ. Նալբանդյան. ամենահեղինակավոր պարբերականն է «Պատմա-բանասիրական հանդեսը»։ Մի ամբողջ սերունդ է դաստիարակվել այս ամսագրով։ Հանդեսն աշխարհում մեծ ճանաչում ունի, նա ամենից շատ պահանջվող պարբերականն է, 124 երկրներից պահանջներ ունենք։ Մկրտիչ Գեղամովիչի մեծ վաստակը այն է, որ նա չթողեց, որ Հանդեսը գաղափարական տարաբերումների ենթարկվի։ Սիրելի խմբագրին ցանկանանք երիտասարդական եռանդ Հանդեսի այս բարձր մակարդակը պահպանելու համար։

Հանդեսին շնորհավորեցին նաև նիստին մասնակցող արտասահմանցի հյուրերը՝ անվանի հայագետ Տիգրան Կուլումջյանը և Երուսաղեմի համալսարանի հայագիտական ամբիոնի դասախոս Ռոբերտա Էրվինը։

Տ. Կուլումջյանը ասաց, որ Հանդեսը սքանչելի պարբերական է, հայագիտական հանրագիտական։ Նա առաջարկեց Հանդեսը և ընդհանրապես հայագիտական դրականությունը արտասահմանում տարածելու համար ստեղծել մի կենտրոն։ Մենք, Սփյուռքի հայագետներս, կաջակցենք այդ գործի կազմակերպմանը։

Ռոբերտա Էրվինը իր ելույթում ասաց. ինձի համար մեծ հաճույք է և մեծագույն պատիվ այս նվիրական բեմին վրա դտնվիլ։ Տոնել ՊԲՀ-ի 40-ամյակը կնշանակե տոնել հայագիտության մ[illegible]մուլին կարևորագույն կոթողներեն մեկը։ Ձեզ բոլորին համար անոր խաղացած դերը և նշանակությունը մեծ են։ Իսկ մեզի համար, որոնք Հայաստանը ապրելու և անոր մտավորական կյանքեն օգտվելու բախտը միայն պարբերաբար կունենան, ՊԲՀ-ին դերը թերևս ավելի ալ կարևոր եղած է։ Աշակերտական մեր առաջին իսկ օրերեն, մենք, շատ շրջաններու մեջ հայագիտությամբ զբաղվողներս, ճանչած

ենք «Պատմա-բանասիրական հանդեսը» իբրև ամենեն ընտիր գիտական հրատարակություն, որ լույս կտեսնե հայերեն լեզվով։ Մեզի հանձնարարած են մեր ուսուցիչներն այդ Հանդեսը կարդալ և ուսումնասիրել, իբրև լավագույն միջոց մեր ընդհանուր գիտությունը զարգացնելու համար։ Խմբագիր Ներսիսյանը մեծ աշխատանք ըրած է տարիներ շարունակ հավաքելու և ներկայացնելու բարձրագույն մակարդակի և որակի հոդվածներ հայագիտության ամեն տեսանկյունեն պատրաստած։ Եվ ոչ միայն այդպես, այլ ՊԲՀ-ն իր ասպարեզ բացած է մեր արտասահմանի ծանոթ գիտնականներու նաև։ Չկա մեծ անուն մը Սփյուռքի մեջ, որու աշխատանքը լույս չէ տեսած ՊԲՀ-ի էջերուն մեջ։ Մենք բոլորս շնորհակալությամբ պարտք ունինք Ձեզ հանդեպ և ՊԲՀ-ի խմբագրական մարմնին հանդեպ, որ նույնիսկ դժվարագույն օրերուն ընթացքին վառ պահած եք հայագիտության այս սքանչելի ջահը։ Երկար կյանք կմաղթենք ՊԲՀ-ին, սրտանց կշնորհավորեմ Ձեզի։

Պատմ. գիտ. դոկտոր Պ. Մուրադյան. «Պատմա-բանասիրական հանդեսը» հայագիտական ամենատարածված ու հեղինակավոր պարբերականն է։ Նրա խմբագիր Ներսիսյանի ջանքերով Հանդեսը մեծ ծառայություն է մատուցում ոչ միայն հայագիտությանը, այլև կովկասագիտությանը, բյուզանդագիտությանը և արևելագիտությանը։ Տ. Կույումջյանը ճիշտ առաջարկ արեց։ Շնորհավորում եմ մեր խմբագրին և բոլոր հայագետներիս։

Այնուհետև ելույթ ունեցավ «Լրաբերի» խմբագիր Ա. Խառատյանը։ Դիմելով Հանդեսի խմբագիր Մ. Գ. Ներսիսյանին նա ասաց. «Ջերմորեն և ի սրտե շնորհավորում ենք Ձեզ «Պատմա-բանասիրական հանդեսի» հրատարակության 40-ամյակի առթիվ։ Հայ գիտական մամուլի անդաստանում «Հանդեսը» զարգացման նոր փուլ նշանավորեց հայագիտության, արևելագիտության, կովկասագիտության, բյուզանդագիտության և հասարակագիտության այլ բնագավառներում՝ միշտ հավատարիմ մնալով գիտական անաչառությանն ու սկզբունքայնությանը։ Չորս տասնամյակ ի վեր իր կորովամիտ հիմնադրի ու գլխավոր խմբագրի՝ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի ղեկավարությամբ «Հանդեսը» շարունակում է իր նվիրական գործը»։

Մանկավարժական ինստիտուտի ամբիոնի վարիչ Մ. Կարապետյանը իր ելույթում նշեց. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորատը, պատմության և բանասիրության ֆակուլտետների դեկանատները, Հայոց, Ռուսաստանի, Ընդհանուր պատմության ամբիոնները, ինստիտուտի պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմը և ուսանողությունը ջերմորեն ողջունում և շնորհավորում են Ձեզ՝ Մկրտիչ Գեղամովիչ, ՊԲՀ-ի հիմնադրման 40-ամյա հոբելյանի առթիվ։

«Պատմա-բանասիրական հանդեսը», որի հիմնադիրն ու անփոփոխ խմբագիրն եք Դուք, եղել և մնում է Աբովյանցիների սիրելի, ընդունված և սպասված պարբերականը, որի հրապարակումները միշտ էլ բավարարում են տվել նրանց պահանջներին, աչքի են ընկել գիտական խորությամբ ու թարմությամբ, բանավեճային թեմաների արդիականությամբ ու հրատապությամբ։ Հանդեսը նաև գիտական լուսավորության ամենալուրջ ու ծանրակշիռ աղբյուր է եղել նրանց բոլորի համար։

ՀՀ ակադեմիայի փոխնախագահ Գ. Սարգսյանն ասաց. եղել են պարբերականներ, որ ծնվել են և դադարել։ Բայց մեծ նշանակություն ունի, թե ով է ղեկավարում պարբերականը։ Նշելով մեր փառավոր «Պատմա-բանասիրական հանդեսի» 40-ամյակը, հավատում ենք, որ Հանդեսը անքակտելի կապերով կապված է Մ. Ներսիսյանի անվան հետ։ Պարբերական հիմնադրելը դժվար է, բայց պահպանելն է առավել կարևորը և մանավանդ մակարդակը պահպանելը։

Պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Ա. Մելքոնյանը գիտական կոլեկտիվի կողմից ջերմորեն շնորհավորելով հանձնեց ուղերձը, որում ասված է. «40 տարի Հանդեսը եղել է հայագիտության զարգացման

հայելին, իր էջերում լուսաբանել է հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական պատմության և մշակույթի բազմաթիվ հարցեր, հրապարակել մեծ թվով արխիվային վավերագրեր ու սկզբնաղբյուրներ։ «Պատմա-բանասիրական հանդեսը» իր արժանի տեղն ունի հայ մամուլի պատմության մեջ և մեծ է նրա անփոփոխ ու նվիրյալ խմբագիր ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի վաստակը այն համաշխարհային գիտական մակարդակի վրա պահելու և ճանաչման արժանացնելու գործում»։

Արևելագիտության ինստիտուտի դիրեկտոր Ն. Հովհաննիսյանը իր ելույթում նշեց, որ 40 տարի շարունակ հայ գիտնականը սպասել և հետաքրքրությամբ ընթերցել է Հանդեսը, որն իր մրցակիցը չունի իր բարձր ճաշակով, ու հարուստ բովանդակությամբ։ Մ. Ներսիսյանը Հանդեսի դուռը փակել է դիլետանտության առջև։ «Պատմա-բանասիրական հանդեսը», իհարկե հայագիտական պարբերական է, սակայն նրա էջերում տեղ են գտել և՛ առևելագիտությունը, և՛ կովկասագիտությունն ու բյուզանդագիտությունը։ Հանդեսին անհամբեր սպասում են նրա բազմահազար ընթերցողները։

Վերջում իր շնորհակալական խոսքն ասաց Հանդեսի խմբագիր Մ. Ներսիսյանը։ Նա իր խորին շնորհակալությունը հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին նրա ողջույնի ուղերձի համար։ Ապա կանգ առավ Հանդեսի առաջիկա մի քանի խնդիրների ու անելիքների վրա։ Ներսիսյանը հույս հայտնեց, որ Ակադեմիայի ղեկավարությունը կապահովի պարբերականի հետագա անխափան հրատարակությունը։

Նախագահության ընդունած որոշման մեջ մասնավորապես ասված է, որ պետք է հրատարակել պարբերականի 40 տարվա մատենագիտությունը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, իսկ 40 տարի Հանդեսի անընդմեջ խմբագիր Մ. Ներսիսյանին ներկայացնել կառավարական պարգևի։

Ն. Դ.

ПРЕЗИДИУМ НАН АРМЕНИИ ОТМЕТИЛ 40-ЛЕТИЕ «ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКОГО ЖУРНАЛА»

Резюме

10 октября сего года состоялось расширенное заседание Президиума НАН РА, посвященное 40-летию «Историко-филологического журнала». Открывая заседание, президент НАН РА академик Ф. Т. Саркисян сказал, что «Историко-филологический журнал», который был основан в 1958 г. по инициативе академика М. Г. Нерсесяна, внес весомый вклад в развитие арменоведения, кавказоведения, востоковедения и сегодня считается самым авторитетным периодическим арменоведческим изданием. Академик Ф. Т. Саркисян зачитал приветствие Президента РА Л. Тер-Петросяна, в котором высоко оценивается роль Журнала в развитии арменоведения. От имени коллектива Ереванского государственного университета выступил ректор академик Р. Мартиросян. С приветствиями обратились также академики В. Бархударян, Эд. Джрбашян. Г. Джаукян, В. Налбандян, Г Саркисян, гости из-за рубежа Тигран Куюмджян, Роберта Эрвин и другие. В конце заседания со словами благодарности выступил бессменный редактор Журнала академик М. Г. Нерсесян.

THE PRESIDIUM OF NAS OF ARMENIA CELEBRATED THE 40TH ANNIVERSARY OF THE „PATMA-BANASIRAKAN HANDES"

Summary

Extended session of the Presidium of NAS of Armenia dedicated to the 40th anniversary of the „Patma-Banasirakan Handes" was held on October 10, 1957. Opening the session the President of NAS of Armenia said that the journal, which was established in 1958 at the initiative of the academician M. G. Nersissian, made a ponderable contribution in the development of Armenology, Caucasology, Orientology which is currently considered the most authoritative armenological periodical. Academician F. T. Sarkissian read the president Levon Ter-Petrossian's welcoming speech, in which he highly appreciates the role of the journal in the development of Armenology. Academician R. Martirossian, Rector of Yerevan State University, addressed the participants on behalf of his University staff. The session was welcomed by the academicians V. Barkhudarian, E. Jerbashian, G. Jakoukian, V. Nalbandian, G. Sarkissian, guests from abroad: Dr. Tigran Koujumjian and Roberta Ervin, and others as well. In return, academician M. G. Nersissian, the permanent editor of the journal expressed his gratitude.

«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Մեծարգո գլխավոր խմբագիր։

Քառասուն տարի առաջ, 1958 թվականին, Ձեր եռանդուն ջանքերի շնորհիվ և Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության հատուկ որոշմամբ, հիմնադրվեց հայ պարբերական մամուլի պատմության մեջ իր նախադեպը չունեցող հայագիտական եռամսյա «Պատմա-բանասիրական հանդեսը», որի գլխավոր խմբագիր հաստատվեցիք Դուք և ահա, չորս տասնամյակ անընդմեջ, մեծ եռանդով ու նվիրումով շարունակում եք ղեկավարել Հանդեսի խմբագրական աշխատանքները։

Ձեր գիտակազմակերպչական սթափ ու բազմարդյուն գործունեության շնորհիվ Ձեր գլխավորած Հանդեսը շատ կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեց միջազգային պատշաճ համբավ ու հեղինակություն։

Անցած քառասուն տարիների ընթացքում Հանդեսն իր հրատարակած 145 մեծադիր համարներում ընդգրկած հարյուրավոր անվանի հեղինակների շուրջ 4000-ի հասնող գիտական հոդվածներով ու հրապարակումներով կազմակերպել, ընթացք և ուղղություն է տվել արդի հայագիտական մտքի զարգացմանը, առաջադրել և քննել հայագիտության և հայ մշակույթի գրեթե բոլոր մասնաճյուղերին վերաբերող տակավին լուսաբանված կամ վիճահարույց բազմաթիվ պրոբլեմներ, հայագիտության պատմությանը, տեսությանը, կովկասագիտությանը և արևելագիտությանը առնչվող արդիական շատ խնդիրներ։ Հանդեսը միաժամանակ գրախոսություններով, հաղորդումներով և դիտական տեղեկատվությամբ աշխուժորեն արձագանքել է Հայաստանում, Սփյուռքում, արտասահմանյան տարբեր երկրներում հայերին ու հայագիտությանը վերաբերող գիտական նոր հրապարակումներին ու կարևոր իրադարձություններին։ Այս լայնահուն և բազմաբնույթ ընդգրկումների, հոդվածների և հաղորդումների տարալեզու հրապարակումների շնորհիվ «Պատմա-բանասիրական հանդեսն» այսօր իր շուրջն է համախմբել հայրենիքի, Սփյուռքի և արտասահմանյան տարբեր երկրների հայ և այլազգի նշանավոր հայագետներին, որոնք Հանդեսում պարբերաբար հրատարակած իրենց բարձ-

րորակ գիտական թղթակցություններով ընդմիշտ ապահովել են նրա միջազգային վարկն ու հեղինակությունը։ «Պատմա-բանասիրական հանդեսն» այսօր աշխարհում դարձել է ամենաճանաչված և ամենահեղինակավոր հայագիտական պարբերականը, որի էջերը շնչում են արգի հայագիտական միտքը հուզող կենդանի հևքով ու ելևէջներով։ «Պատմա-բանասիրական հանդեսի» այս քառասնամյա իսկապես հաղթարշավի համար հայագիտությունն ամենից առաջ պարտական է Ձեզ և Ձեր գլխավորած խմբագրական հանձնաժողովի քառասնամյա անձանձիր, բոլորանվեր աշխատանքին։

Ուստի սրտանց շնորհավորելով «Պատմա-բանասիրական հանդեսի» այս քառասնամյա պանծալի հոբելյանը՝ թույլ տվեք սեղմել Ձեր վաստակած, տակավին կորովի ձեռքը, ցանկալ քաջառողջություն, Ձեզ և խմբագրական հանձնաժողովին՝ նորանոր հաջողություններ, որպեսզի Հանդեսը 21-րդ դարաշեմին նոր և առավել զորեղ շեշտերով աշխարհում հնչեցնի հայագիտական մտքի նվաճումները։

Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար